INTERNATIONAL BACCALAUREATE
BACCALAURÉAT INTERNATIONAL
BACHILLERATO INTERNACIONAL

ARMENIAN A1 – STANDARD LEVEL – PAPER 1
ARMÉNIEN A1 – NIVEAU MOYEN – ÉPREUVE 1
ARMENIO A1 – NIVEL MEDIO – PRUEBA 1

Thursday 17 May 2001 (afternoon)
Jeudi 17 mai 2001 (après-midi)
Jueves 17 de mayo de 2001 (tarde)

1 hour 30 minutes / 1 heure 30 minutes / 1 hora 30 minutos

INSTRUCTIONS TO CANDIDATES

- Do not open this examination paper until instructed to do so.
- Write a commentary on one passage only. It is not compulsory for you to respond directly to the guiding questions provided. However, you may use them if you wish.

INSTRUCTIONS DESTINÉES AUX CANDIDATS

- Ne pas ouvrir cette épreuve avant d'y être autorisé.
- Rédiger un commentaire sur un seul des passages. Le commentaire ne doit pas nécessairement répondre aux questions d'orientation fournies. Vous pouvez toutefois les utiliser si vous le désirez.

INSTRUCCIONES PARA LOS ALUMNOS

- No abra esta prueba hasta que se lo autoricen.
- Escriba un comentario sobre un solo fragmento. No es obligatorio responder directamente a las preguntas que se ofrecen a modo de guía. Sin embargo, puede usarlas si lo desea.

Գրեք մի մեկնաբանություն հետևյալ հատվածներից մեկի մասին:

1. a)

Թե ինչո՞ւ եմ գրում, ինքս էլ չգիտեմ:

Թերևս, որովհետև բառերն ինձ համար նույնն են, ինչ արյան կաթիլները՝ կյանքի համար:

Թերևս, որովհետև շարունակ զգում եմ մահկանացությունս:

Ու թերևս, որովհետև արվեստը արտացոլումն է կյանքի և հաճախ ավելի պարտադիր քան կյանքը:

Բայց հիմնականում ոչ թե անմահությունն է, այլ մահը պարտության մատնելու մշտնջենական տենդը, որը պատճառն է ստեղծագործության: Ո՛չ թե հարատևումը, այլ վաղանցիկության կապույտ լարը, որից հնչում է ժամանակավորի երգը: Այդ երգը արձագանգում է սրտերում, երբ բանաստեղծը համարձակորեն անցողականի բիբերին է նայում: Այդ դեպքում, նրա խոսքը լինում է հատու, հարազատ ու խիզախ:

Արվեստի միջոցով մոտենում ենք մեզ, մարդկայնանում, ուստի և մերձենում աստվածության:

Սակայն կարևորը խո՛սքն է:

Խոսքը, որ քանդակվում է ժայռերից, հոգիների ընդերքից, փորձառության գետերից, ցա՛վով ու երկունքով, խինդո՛վ ու խենթությամբ, և՛ կշիռով ու տրամաբանությամբ ու նաև արյան երգով, սուրբի մրմունջով ու մսի կանչով:

Ճշգրիտ խոսքը: Մերկ ու անամոթ ճշմարտությունը:

Անկեղծ ու ճշմարիտ խոսքը:

Առանց խոսքի չկա ազատություն: Չկա ներքին ազատություն: Չկա անհատական ու հավաքական ազատություն: Իսկ մե՞նք: Մեր գրականությունը ի սփյուռս աշխարհի, տակավին դեգերում է ինքնակերտ ու պարտադրված պայմանականությունների մթագնած արահետներում: Հաճախ ավանդականը շփոթում ենք բարոյագիտության հետ, երբ բարոյագիտության համար ունենք դպրոց ու եկեղեցի...:

Երբ անազատ է խոսքը, անազա՛տ է գրականությունը:

Անազատ եմ ես:

Երբ աշխարհի որևէ անկյունում ճնշվում է մեկ հոգու խոսքը, ճնշվում է նաև ի՛մ խոսքը: Որովհետև մարդկության ընտանիքի մեկ անդամի կաշկանդումը, կաշկանդումն է համայն մարդկության:

Իմ բողոքը այդ պայմանականությունների դեմ է:

Ո՞ւր է արդի մարդը մեր գրականության մեջ:

Կյանքը նույնը չէ ինչ էր երեկ: Անհատական ու հավաքական տագնապներից է անցնում մարդկությունը: Ընկերային հեղաշրջումների հետ զուգընթաց տակնուվրա են լինում դարավոր հասկացողություններն ու երբեմնի կուռ նկատված ավանդությունները: Մարդը կանգնել է ճարտարարվեստի դիմաց և ջանում է մի կերպ պահպանել իր անհատականությունը: Տագնապահար է մարդը:

Փորձե՞լ ենք արտացոլել ներկայ մարդու ներաշխարհը...:

Կա երեկվա և այսօրվա էջը, որ պիտի գրվի:

Ինձ մտահոգում է վաղվա էջը, որը սպիտակ ծուլությամբ հորանջում է:

Վաղվա էջը գրելու համար ինձ անհրաժեշտ են մանկան աչքեր, արկածախնդրի ոտքեր, բանաստեղծի սիրտ և իմաստունի միտք:

Այս բոլորը ես որտեղի՞ց գտնեմ...

Հակոբ Կարապենց, *Ազատ Խոսքի Մասին* (գրական ակնարկ) (1977)

– Հեղինակն ինչպե՞ս է դիտում հայ գրականությունը ընդհանրապես գրականության ծիրի մեջ:

– Ինչպե՞ս եք վերաբերվում խոսքի ազատությանը տրված գրողի արժևորմանը:

– Ինչպե՞ս կնկարագրեք գրողի ակնկալությունը գալիքի գրականությունից:

– Ինչպիսի՞ մեթոդ է օգտագործում գրողը, որպեսզի տպավորի և համոզի ընթերցողին:

1. b)

Աղոթք Նոր Տարվա
(Հատված)

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
ծաղիկներու պես զայն ժողվեմ ճամփուս վրան՝
նայվածքներուն մեջ ամենուն և ամեն օր:

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
զանգակներո՜ւ պես զայն կախեմ ամեն դրան՝
ու զերթ նարոտ ամեն դրան զայն պսակեմ:

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
ճրագներու պես զայն բոցեմ բազմաստեղնյան՝
խավարին մեջ ամեն երդ ու խրճիթներու:

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
ու չըլլա, որ ուրիշներու կոծն ու կական
խեղդել ուզեմ ջրվեժին մեջ դափիս ձայնին:

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
զայն ջուրերուն վրան ձգեմ իբրև ուռկան.
զայն իբր արոր ակոսներո՜ւն ձգեմ վրան:

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական.
զայն իբր անձրև ցողեմ ամեն դաշտի վրան,
զայն իբր արև բաշխեմ ամեն հորիզոնի:

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական՝
ժողվել՝ հոգվույն մեջ ծերերուն, կույսին, մանկան,
պարզ մարդերուն՝ գեղջուկներուն ու բանվորին:

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական՝
ժողվել՝ հոգվույն մեջ ամենո՜ւն, համայնական
հոգվույն ամեն մասնիկներուն մեջ՝ ամեն ժամ:

Ճամփաներե՜ն, ու գետերե՜ն, ու դաշտերե՜ն,
անտառներե՜ն, ու լեռներե՜ն, ու ձորերե՜ն,
տանիքներե՜ն, ու տուներե՜ն, ու դուռներեն՝

Տո՜ւր ինձի, Տե՜ր, ուրախությունն անանձնական:

Միսաք Մեծարենց, *Մարգարիտներ Հայ Գրականության* (1974)

- Ի՞նչ է հուշում քերթվածի խորագիրը:

- Ի՞նչն է այս պոեմը դարձնում երաժշտական:

- Պոեմի կառուցվածքն ինչպե՞ս է բանաստեղծին օգնում հասնել իր նպատակին:

- Բանաստեղծն ինչպե՞ս է արտահայտում իր այլասիրությունը և հաշտեցնում մասնավորը ընդհանրականի հետ: